

Վարդան Եղիազարյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻՆ ՍԻՐՈ ՏԱՂԵՐԳՈՒ.

ՍԻՐՈ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ «ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԵՎ ԱԵԱՅԻ» ՍԻՐԱՎԵՊՈՒՄ

**Միջնադար, տաղերգություն, քնարական հերոս,
վիպական տաղ, սեր, հույզեր, դավանանք, հոգու խռովք**

Միջնադարյան տաղերը հայ բանաստեղծության արժեքավոր և անբաժանելի մասն են կազմում: Առանց տաղերգության հնարավոր չէ պատկերացնել մեր գրականության ամբողջական պատմությունը: Լինելով ժողովրդի պատմական, ազգային և հոգևոր կյանքի գեղարվեստական դրսևորումները՝ տաղերն ունեն և ճանաչողական, և գաղափարական ուրույն նշանակություն, որովհետև միջնադարյան հայ մարդու ներաշխարհի, հույզերի ու ապրումների, նրա պատկերացումների ու մտածելակերպի արտացոլքն են, նրա երազների, տազնապների ու տարակույսների, արտաքինի ու ներքինի, գեղեցկությունների ու սիրո սքանչելի արտահայտությունը: Այս առումով խիստ բնորոշ են Հովհաննես Թլկուրանցու վիպական տաղերը:

Թլկուրանցին միշտ էլ հայ միջնադարյան բանաստեղծությունը հետազոտողների ուշադրության կենտրոնում է եղել, սակայն, որքան էլ զարմանալի է, ի տարբերություն նրա սիրո տաղերգության, վիպական տաղերը անբավարար են ուսումնասիրվել ու գնահատվել: Իրականում վիպական տաղերը ևս առանձնապես կարևոր են բանաստեղծի չափածոյի ընդհանուր համակարգում, քանի որ ինչ-որ չափով ավելացնում են հայ միջնադարյան պոեզիայի էպիկականությունը, որ նրանում համեմատաբար թույլ է արտահայտվել: Հովհաննես Թլկուրանցին միջնադարյան առաջին բանաստեղծն է, որը ստեղծել է վիպական տաղեր՝ մշակելով ժողովրդական բանահյուսությունից վերցված սյուժեներ, որոնք այսօր էլ միջնադարյան քնարերգության առավել արժեքավոր էջերից են: Դրանցից մեզ են հասել «Աշայի և Յովհաննեսի», «Գեղ մի կայր Նարեկ ասեն», «Տաղ սրբոյն Ալեքսիանոսի», «Տաղ վասն Սուրբ Յովհաննու գլխատման», «Մեկնութիւն Արարածոց» տաղերը, որոնց մեջ երևում է զգայուն, աշխույժ, ինքնատիպ քնարերգակը՝ իրեն հատուկ գունագեղ ու թրթռուն ոճով:

Հովհաննես Թլկուրանցու բանաստեղծության գեղարվեստական ուժը ամենից առաջ արտահայտվել է սիրո թեմայով գրված ստեղծագործություններում: Նա թեև անմիջականորեն շարունակում է իր նախորդին Կոստանդին Երզնկացուն, սակայն ձգտում է ավելի մատչելի ձևերի: Նրան հատուկ չեն Երզնկացու հոգու խռովքն ու դրաման: Թլկուրանցին ավելի շատ վայելքի ու գեղեցկության, զմայլանքի ու հիացումի բանաստեղծ է: Նրա գործերում երևում է նաև Գրիգոր Նարեկացու հեռավոր ազդեցությունը: Թլկուրանցին երևի շատ է սիրել մեծ բանաստեղծի «Ծննդյան մեղեդին», որովհետև վերջինիս որոշ պատկերներ ու արտահայտություններ, թեթև

փոփոխության ենթարկելով, կիրառում է առանձին երգերում, ինչպես՝ «Ծոցն է լըցած սպիտակ վարդով», «Ծոցդ է դրախտ անմահութեան», «Աչերդ են ծովեր, խումար ու մետան», «Ծով-ծով աչեր ու լուս քընար»¹ և այլն:

Թլկուրանցու տաղերում ակներև է սիրող մարդու հոգու թրթիռը, ամեն ինչ կարծես բխում է քնարերգուի սրտից, և պատահական չէ, որ Ղ. Ալիշանը նրան բնորոշել է իբրև «ամենեն ավելի բանաստեղծ և տաքսիրտ»²:

Իսկապես, Թլկուրանցու երգերում սիրո գաղափարը կատարյալ պաշտամունքի առարկա է, քանի որ երբ սերը տիրապետում է մարդու հոգուն, նա դառնում է հլու-հնազանդ, տարերայնորեն ենթարկվում սիրո Աստծո կողմից սահմանված պահանջ-ներին: Ինքը՝ Թլկուրանցին, խոստովանում է, որ սիրո խելագար է դարձել: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ տաղերի վերնագրերում, հատկապես դրանց վերջին տողերում իր անունը հիշում է իբրև «ԽՆ Յովհաննես»:

Հարիւր տարու հաբեղանին,
Որ ճերմակն է դարձեր դեղին,
Կտրէ գքուստիկ պատարագին
Ու գքեզ ուզէ առջև խաչին³:

Սիրո երգերի քնարական հերոսը ինքը՝ բանաստեղծն է: Տաղերը կարևորվում են ոչ միայն իրենց պատկերային առանձնահատկություններով, այլև ընդգրկման խորությամբ: Քնարական հերոսը, իբրև միջնադարի մարդ, երբեմն հիշում է, որ իր արարքը եկեղեցու և հավատի պահանջներին չի համընկնում, ուստի ինքը մեղա է գալիս, բայց և խոստովանում, որ անգոր է ամենակարող սիրո առջև.

Քանի տեսնում կու սարսափիմ,
Սիրտս ի փորիս կառնու գալար.
Ինձ մեղադիր յէ՞ր կու լինիք՝
Ով որ տեսնու չի մնայ արդար⁴:

Բանաստեղծն իրեն համեմատում է սիրո տոչոր այն թիթեռի հետ, որը մթության մեջ պտտվում է մոմի շուրջը՝ այրվելով ու չհասնելով իր երագին: Մի այլ տաղում Թլկուրանցին զուգադրում է Աստծուն և սիրած աղջկան ու չի կարողանում որևէ մեկին առավելություն տալ: Մեկը հրապուրում, նրան տանում է իր հետևից, մյուսը վեր-հիշել է տալիս բարեպաշտ մնալու մասին իր պատգամները.

Բայց ինչ անեմ, ճարակ չըկայ,
Մահու մեղաց ներքև եմ ես,

¹ Հովհ. Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվագյանի, Երևան, 1960:

² Ղ. Ալիշան, Յուշիկը հայրենեաց հայոց, հ. 2, Վենետիկ, 1870, էջ 125:

³ Հովհ. Թլկուրանցին, Տաղեր, էջ 135:

⁴ Նույն տեղում, էջ 132:

Հային ի քեզ, հային ի նայ,
Որ ի հողոյ ստեղծեր է գքեզ¹:

Իսկ ի՞նչ է տեսնում բանաստեղծը սիրած էակի և սիրո մեջ: Սերը մի կատարելություն է, որ կարող է գայթակղել նույնիսկ Աստծուն: Սիրո մարմնացում աղջիկը, ըստ բանաստեղծի, Աստծու ընտրյալն է.

Ծոցդ է դըրախտ անմահութեան,
Անմահական պըտղով դըրախտ,
Դու օրինակ ես աղէկներուն,
Ձքեզ սիրէ Աստուած և մարդ²:

Եթե այդպես է, բնականաբար, մահկանացու թլկուրանցին պետք է տեղի տար սիրո առաջ: Այսքան սիրող բանաստեղծը մերժման դեպքում նույնքան էլ խորապես ցավ ու ողբերգություն է ապրում: Եվ երբ սիրո ճանապարհին նրա երազների կինը չի արձագանքել, չի հասկացել ու մերժել է, բանաստեղծը դառնորեն հուսահատվել ու իր բողոքի խոսքն է ասել.

Ես իմ սրտիս դանակ ածեմ,
Ջաչքս ճաղի տամ հանելու...³

Իսկ «Տաղ Յովհաննեսի վասն սիրոյ»⁴ սքանչելի բանաստեղծության մեջ մեզ ներկայանում է կյանքից դառնացած թլկուրանցին, որին նենգել ու խաբել են, և հիմա անսփոփ իր դժբախտության պատմությունն է անում: Թեև սիրած էակը անչափ դաժան է գտնվել նրա նկատմամբ, բայց իրենց բաժանման բուն պատճառը բանաստեղծը համարում է չարական մարդկանց.

Ո՞ր է դավլըդ, ո՞ր է երդումն, որ բռնեցաք
գաստուած վըկայ,
Ի գատ ընկաք օտարացաք, չարկամն եղև մեզ մահանայ⁵:

Պարզ երևում է, որ թլկուրանցին անմնացորդ սիրահար է եղել, և որ իր զգացմունքները շինծու չեն, այլ անձնական խոր ապրումի արտահայտություն: Եվ բնական է,

¹ Նույն տեղում, էջ 127:

² Նույն տեղում, էջ 129:

³ Նույն տեղում, էջ 138:

⁴ Միջնադարյան քնարերգության զարդերից մեկն է այս տաղը, որի մասին Ա. Չոպանյանը իրավամբ գրում է. «Եթե ապացուցվի, որ սիրերգին հեղինակը Յովհաննես թլկուրանցին է, այդ արդեն իսկ զմայլման արժանի քերթողը ավելի ևս պիտի մեծանայ մեր աչքին, որովհետև այս կտորը ավելի խոր է և ուժեղ, քան թլկուրանցիի մյուս մեզի ծանոթ սիրերգները» (Տես «Հայ էջեր», Փարիզ, 1912, էջ L2):

⁵ Հովհ. Թլկուրանցին, Տաղեր, էջ 218:

որ սիրո խենթությանը հանձնված տաղերգուն վիպական բանաստեղծության նյութ է դարձրել սերը:

Սիրային մի գեղեցիկ ստեղծագործություն է «Այս ի՞նչ կրակ էր զիս այրեց» տաղը, որը միջնադարյան քնարերգության մեջ վիպական առաջին քերթվածքն է, ուր արտահայտված են սիրո ամենագոր ուժն ու զորությունը.

Այս ի՞նչ կրակ էր զիս այրեց,
Կամ ի՞նչ խաւար՝ որ զիս պատեց,
Ես վէմ անխախտ էի՝ խախտեց,
Պողպատ ամուր՝ զէտ ջուր հալեց¹:

Բանասիրության մեջ փորձ է արվել սիրո այս գողտրիկ տաղը վերագրել թլկուրանցուն, աներկբայելի է, որ դրա հեղինակը մեծատաղանդ սիրերգակ բանաստեղծ է, ավելին՝ այս տաղը ևս նրա աստվածային շնորհի զորեղ արտահայտություններից է: Բանասերներ Կ. Կոստանյանցը, Ա. Սրապյանը և այլք վիճելի թվացող այս տաղը վերագրել են Յովհաննես Երզնկացուն, ուրիշները (Ա. Մնացականյան) համարել են ժողովրդական ստեղծագործություն²: Սակայն այս կարծիքները անընդունելի են, քանի որ գեղեցիկ սիրապատումը անհատական ստեղծագործություն է, արդարև պատկանում է թլկուրանցուն, որի հաստատման համար կան որոշակի հիմքեր:

Ա. Սրապյանն իր «Յովհաննես Երզնկացի» աշխատության մեջ ամեն կերպ ձգտում է ապացուցել, որ տաղը պատկանում է Երզնկացու գրչին, և նշում, թե այն «իր ոգով ու գաղափարով տարբերվում է հայ միջնադարի սիրերգությունից, սկսած Կոստանդին Երզնկացուց մինչև Սայաթ-Նովա, և բնութագրական չէ մեր սիրերգակներից ոչ մեկի համար, մինչդեռ, ինչպես իր ամբողջության մեջ, այնպես էլ ավարտով հարազատ է Երզնկացու հայացքներին, նրա ողջ մատենագրական վաստակին առհասարակ»³:

Այս տեսակետը, սակայն, համոզիչ չէ, քանի որ խրատական, բարոյակրթական, դաստիարակչական իմաստ ու բովանդակություն արտահայտող Յովհ. Երզնկացու գրական ժառանգության մեջ չկա նման բնույթի սիրային որևէ քերթվածք: Մինչդեռ «Աշայի և Յովհաննեսի»⁴ տաղը և՛ իր թեմայով ու բովանդակությամբ, և՛ լեզվով ու ոճով, և՛ թե պատումի ձևով հանգեցնում է այն համոզման, որ այն պատկանում է իրեն մշտապես «խև» անվանող Յովհ. Թլկուրանցուն: Այստեղ բոլորովին էլ պատահական չէ «խև» մակդիրի առկայությունը, քանի որ միջնադարյան ոչ մի տաղերգու, բացի

¹ Նույն տեղում, էջ 226:

² Տե՛ս Կ. Կոստանյանց, Նոր ժողովածու, Դ պրակ, 1896, էջ 11-15: Ա. Սրապյան, Յովհաննես Երզնկացի Պլուզ, Երևան, 1993: Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 514:

³ Ա. Սրապյան, Յովհաննես Երզնկացի Պլուզ, էջ 160-161:

⁴ Այս տաղը պահպանված է Մատենադարանի 4 ձեռագրերում, որոնցից մեկում կոչվում է «Տաղ Երզնկացի Յովհանիստ ասացեալ», մյուսում՝ «Տաղ ասացեալ իս Յովհանիստ ի վերայ Աշային», երրորդում՝ «Տաղ ազնիւ ի Յովհանիստ», իսկ չորրորդում անխորագիր է:

17-րդ դարի դրիմահայ բանաստեղծ Խև Կաֆացուց, իրեն այդ մականունով չի անվանել, ինչպես Թլկուրանցին:

Գեղեցիկ նկարագրություններով հարուստ այս տաղը սիրային մի պատմություն է քահանայի որդու և մոլլայի աղջկա մասին, որում արծարծվում է նաև դավանանքի խնդիրը, քանի որ Հովհաննեսը քրիստոնյա է, իսկ աղջիկը՝ Աշան, մուսուլման:

Տաղի սկիզբը պատմողական-քնարական բնույթ ունի, իսկ հետո աստիճանաբար վերածվում է տրամախոսության: Առաջին պատկերը սկսվում է հանդարտ ու խաղաղ: Հովհաննեսը դեռևս պատանի է, «Վերի վանաց» սան.

Օրն էր շաբաթ լոյս կիրակի,
Վերի վանիցն ի վայր կուգի,
Բուրվառն ի ձեռս ու խունկն ի լի,
Սաղմոսարանն յանդս ունեի¹:

Սակայն դիպվածը ստիպում է նրան մոռանալ ուսած սաղմոսը, գրելն ու կարդալը: Նա հիշում է մեջքը ճոճող ու սեթևեթ քայլվածքով Աշային, նրա խելահան հոնքերը, «Թարեզտանի» աչքերը: Մի անգամ էլ սաղմոսարան կարդալով ու դանդաղ ընթացող Հովհաննեսը քաղաք է իջնում և հանկարծ հանդիպում իր սիրած էակին՝ «պօզ պետաւին» հեծած: Իսկ Աշան, խաղացկուն, անհանգիստ նժույզի վրա վետավետալով, խնձոր է նետում նրան՝ ուշադրություն գրավելու նպատակով: Տղան փորձում է անտարբեր մնալ, սակայն երկրորդ անգամ արդեն անկարող է դիմանալ փորձությանը.

Խնձոր ձգեց, մտիկ չարի,
Մէկ մայլ ձգեց ցածցայ առի...

Այստեղից էլ սկսվում է սիրո դրաման: Հովհաննեսի մայրն անհանգստացած որոնում է իր որդուն և տագնապած օգնություն խնդրում աբեղաներից ու սարկավագներից՝ հուսալով, թե որդին շուտով ուշքի կգա.

Յովհաննեսին մայրն է տղայ,
Հագեր վալայ, վրան ջուպայ,
Ջօրն ի վաներն ի ժուռ կու գայ,
Ու խունկ ու մոմ կու խոստանայ:

Մայր ու որդի ջանում են համոզել մեկմեկու: Մայրը հիշեցնում է նրան տեր հոր գայրույթը, իր զավակի միմուճար լինելը, ուստի և այդ սխալ ճանապարհից հետ կանգնելու անհրաժեշտությունը.

- Ծօ Յովհաննէս, ծօ իմ տղայ,
Դարձիր ի տուն, ասա «մեղա՛յ»,

¹ Հովհ. Թլկուրանցին, Տաղեր, էջ 226:

Հոն քո տերտերն կու ճորայ,
Թէ Աշան ընկեր ի հետ նորա:

Սակայն տղան հակաճառում է, քանի որ Աշայի սքանչելի գեղեցկության ստրուկը կարող է դառնալ նույնիսկ տերտերը, եթե մի անգամ տեսնի նրան.

- Ա՛յ իմ մարիկ, ես քեզ ծառայ,
Թէ իմ տերտերն զիս ճորայ,
Նայ ես զԱշան ցցնեմ նորա,
Քան զիս ու այլ խև կու լինայ:

Նրան չեն համոզում ու հրապուրում անգամ մոր խոստումները, թե՛

Քեզի բերեմ հայու դըստրիկ,
Ըզքեզ օրհնել տամ քահանայ:

Պատանեկան անկեղծ սիրով տարված Հովհաննեսն այլևս չի կարող նրան փոխել ուրիշով.

Հայ իմ մարիկ, մի՛ տըխմարնար,
Չըկայ նըման գեմ Աշային,
Լեզուն պիւլպիւլ, ձայնն դումրի,
Մէջքըն բարակ գետ ֆռանկի:

Նրա սերը այնքան վերամբարձ ու ազդու է, որ անգամ մոռանում է իր սովորած սաղմոսները:

Տխուր է նաև Աշան, քանի որ նրա ծնողները նույնպես պահանջում են հրաժարվել իր սիրելի Հովհաննեսից.

Աշան նստեր փանճարային
Ու խիստ տրտում, ափն երեսին,
Թայսօր ծեծեց իմ հայր դատին –
Է՞ր կու սիրես զհայուն որդին,
Տես թէ կելնե մեկ մի կու գա՞յ:-
Ականջըն խո՛ւլ Յովհաննեսին:

Լուրը հասնում է սիրատոջոր երիտասարդին: Նա, տագնապած, գրական ափին, միանգամից հայտնվում է խանի պալատի առջև: Եվ «փոքր ի պոյաց», բայց «ծանր խելաց» Հովհաննեսը, որ ուսումնական էր «Վերի վանաց» ու բանաստեղծ, կաֆաներ է ասում և անուսնանալու թույլտվություն ստանում: Իսկ բերդի գլխին կանգնել է Աշան՝ հագած «զկանանչն ու զծիրանին»: Նա գիտի, որ սիրած տղան չի ուրանա իր կրոնը,

և ինքն է համաձայնում քրիստոնեություն ընդունել: Ընդ որում, քրիստոնեություն է ընդունում ոչ թե հասարակ, մի սովորական աղջիկ, այլ քաղաքի «ղատիի» դուստրը.

Գնա շինե եկեղեցի,
Որ գամ մտնում կոշկովս ի ներս,
Պսակ դնեն, զմեզ օրհնեն,
Թող քո սրտին կամքն լինայ:

Այս գրավիչ ու հետաքրքիր վիպական տաղում ակներև են բանաստեղծի վարպետությունը, բարձր արվեստը, նկարագրելու շնորհքն ու աշխույժ համեմատությունները, որոնք բնորոշ են միմիայն թվկուրանցու գրչին: Ըստ Աբեղյանի միջնադարյան տաղերգուներից թվկուրանցին է, որ Գրիգոր Նարեկացուց ու Կոստանդին Երզնկացուց հետո առանձնահատուկ ուժով պատկերել է կնոջ արտաքինը¹.

Եկաւ անցաւ ու ճոխ քայլեց,
Ճոճաց ու զմէջքըն կոտրտեց,
Դարձաւ ի յետ խոշոր բնայեց,
Անձըս տեսաւ ու զահրմագեց:
Մէկ մի հեծեր պօզ պէտաւի,
Եկաւ անցաւ քաջ մուհալի,
Աչեր ունէր թաւրեզ տանի,
Ուներն զխելքըս կու տանի:

Վիպական այս տաղը, որ ազատ ու անկաշկանդ արտահայտությունն է մեծ սիրո վայելքի, մի անգամ ևս հաստատում է, որ թվկուրանցին հայ միջնադարյան սիրերգության մեջ իր վիպական տաղերով կարևոր տեղ է զբաղեցնում մասնավորապես նման թեմատիկայով գրված չափածո խոսքի համակարգում:

Վարդան Եղիազարյան, Յովհաննես Թվկուրանցին սիրո տաղերգու. սիրո հոգեբանությունը «Յովհաննեսի և Աշայի» սիրավեպում – Միջնադարյան տաղերը հայ բանաստեղծության արժեքավոր և անբաժանելի մասն են կազմում: Առանց տաղերգության հնարավոր չէ պատկերացնել մեր գրականության ամբողջական պատմությունը: Լինելով ժողովրդի պատմական, ազգային և հոգևոր կյանքի գեղարվեստական դրսևորումները՝ տաղերն ունեն և՛ ճանաչողական, և՛ գաղափարական ուրույն նշանակություն: Այս առումով խիստ բնորոշ են Յովհաննես Թվկուրանցու վիպական տաղերը: Սիրային մի գեղեցիկ ստեղծագործություն է «Յովհաննես և Աշա» տաղը, որը միջնադարյան քնարերգության մեջ վիպական առաջին քերթվածքն է, ուր արտահայտված են սիրո ամենազոր ուժն ու հմայքը:

Вардан Егиазарян, Оганес Тлкуранци как лирик: психология любви в средневековом романе “Ованес и Аша”-

¹ Տես Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1970, էջ 487:

Vardan Yeghiazaryan, Hovhannes Thlkoorantsi as a love poet, psychology of love in the romance «Hovhannes and Asha» – Medieval century poetry is a very valuable and indivisible part of history of Armenian literature. It is impossible to understand the whole history of our literature without poetry. Showing our historical, national and spiritual sides they have cognitive and ideological significance. In this sense the epic verses of Thlkoorantsi are very peculiar. “Hovhannes and Asha” is a nice amorous verse, which is the first epic work in medieval lyric poetry where the strength and power of love is represented.

Վարդան Եղիազարյան – ԵՊՀ հայ գրականության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու, հայ բանասիրության ֆակուլտետի փոխդեկան

